ՎՈՎԿԱ ԴՈՒՌԱԿ

# ՆՅՈՒԹԵՐ, ՈՐՈՆՑ ՊԱՏՃԱՌՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՀԱՅԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ




## ՅԱՇԻԿՍ ՎԿԱ

Երեկ ՀՀ ոստիկանապետ Վովա Գասպարյանը առաջին անգամ որոշել էր կառավարության նիստից հետո շենքից դուրս գալ ոչ թե ետեւի մասից, այլ դիմացի: Շոուն կարծես շատ լավ էր ստացվում: Գասպարյանը կառավարության շենքի առաջին հարկում իրեն հատուկ արտիստիկ ոճով շփվեց լրագրողների հետ, մի 15 րոպեում մի 20 անգամ տվեց Աստծու անունը, խոսեց օրենքից, ոստիկանության նկատմամբ վստահության վերականգնումից ու էլի շատ լավ-լավ բաներից, հետո՝ շենքից դուրս գալով ավելի արտիստիկ ոճով շփվեց տարբեր հարցերով բողոքող քաղաքացիների հետ: Արցունքներն աչքերին մի պատմություն պատմող կնոջը իր օգնականի հետ ուղարկեց նստելու իրեն ուղեկցող մեքենաներից մեկը, ու քիչ անց ինքն էլ նստեց մեքենան ու գնաց: «Սուրբ Վովայի հայտնությունը» պայմանական անունով շոուն կստացվեր, եթե մեր ֆոտոխցիկը չֆիքսեր նրան սպասարկող «Մերսեդես-Բրաբուս» ամենագնացի (յաշիկ) դիմապակին (նկարում): Իսկ այդտեղից բացակայում էին ԱՊՊԱ եւ տեխզննության կտրոնները: Եթե ՀՀ որեւէ սովորական քաղաքացի փորձի առանց ԱՊՊԱ եւ տեխզննության կտրոնները մեքենայի դիմապակուն փակցնելու դուրս գալ փողոց, ապա առաջին իսկ պատահած ճանապարհային ոստիկանը կկանգնեցնի մեքենան ու կտուգանի: Քանի՞ անգամ են ճանապարհային ոստիկանները կանգնեցրել այս «համեստ» պետհամարանիշերով «յաշիկը» ու քանի՞ անգամ են տուգանել: Այս հարցը երեկ մեր թղթակիցն ուղղեց ճանապարհային ոստիկանության պետ Նորիկ Սարգսյանին: Բնականաբար՝ ոչ մի անգամ: Նորիկ Սարգսյանը, չգիտես ինչու, համոզված է, որ այդ մեքենան համ տեխզննում է անցել, համ էլ ԱՊՊԱ պայմանագիրը կա: «Հաստատ կլինի, գուցե պտակիները մգացված են, ուղղակի չե՞ն երեւում այդ կտրոնները»,- ասաց ճՈ պետը: Շատ լավ էլ երեւում են՝ երեւում են, որ չկան: Չարժե նույնիսկ խորանալ ու քննարկել, թե արդյոք մանրուք չէ՞ դիմապակուն ԱՊՊԱ ու տեխզննման կտրոն չփակցնելը: Օրենքից ու Աստծուց այդքան շատ խոսող ոստիկանապետի պարագայում դա, իհարկե, մանրուք չէ, մանավանդ որ ՀՀ որեւէ ուրիշ քաղաքացու տրված չէ Աստծո անունը տալով ֆոֆռալ առանց ԱՊՊԱ եւ տեխզննման կտրոններ դիմապակուն փակցնելու: Եւս մի ուշագրավ «մանրուք»: Երեկ ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը մեր թղթակցի հարցմանն ի պատասխան տեղեկացրեց, որ այս «յաշիկը» հենց Վովա Գասպարյանի սեփականությունն է: Հարցին, թե որտեղից Վովա Գասպարյանին այդքան փող, պարոն Ահարոնյանը կոնկրետ պատասխան չտվեց. «Դե, նա չորս տասնամյակ աշխատել է ոստիկանության համակարգում...»: Խիստ տրամաբանական, սպառիչ, հարցեր չառաջացնող պատասխան է: Տարօրինակ է, որ ինքներս չէինք կռահել, չէինք հասկացել, որ 40 տարի հայոց կամ սովետահայոց ոստիկանությունում աշխատելով՝ կարելի է ունենալ այնպիսի մեքենա, որ արեւմուտքում նույնիսկ մեծահարուստները դժվարությամբ են իրենց թույլ տալիս:

**Նյութը տպագրվել է «ՀԺ»-ի հունվարի 13-ի համարի առաջին էջում: Հեղինակը Հայկ Գեւորգյանն է:**

ՄԻ ԿՊԻՐ, ՈՐ ՉԿՊՑՆԵՍ

Մեր թերթի նախորդ երկու հրապարակումներից հետո, շաբաթ օրը երեկոյան համացանցում լուր տարածվեց, թե ՀՀ ոստիկանության պետ Վովա Գասպարյանի ավտոմեքենայի դիմապակուն ԱՊՊԱ կտրոն է հայտնվել: Այս տեղեկությունը մեր թղթակցի հետ զրույցում եւս մեկ անգամ հաստատել է ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը: Հիշեցնենք, որ Գասպարյանի ավտոմեքենայի դիմապակուն ԱՊՊԱ կտրոնի բացակայության խնդրին անդրադարձել էինք «ՀԺ»-ի ուրբաթ եւ շաբաթ օրերի համարներում: Աշոտ Ահարոնյանն ահա ասել է, թե ոստիկանապետը արձագանքել է հրապարակումներին եւ ճանապարհային ոստիկանության 1-ին գումարտակի տեսուչի կողմից վարչական իրավախախտման արձանագրություն է կազմվել վարորդի՝ Գագիկ Զոհրաբյանի վերաբերյալ: «Ոստիկանության պետը պարզապես չէր նկատել, որ ԱՊՊԱ կտրոնը ժամանակին չի փակցվել համապատասխան տեղում, ինչի համար ներողամտություն է հայցում եւ գոհունակություն հայտնում լրագրողների օպերատիվ աշխատանքի կապակցությամբ, ինչը հնարավորություն է տվել արագ շտկել վրիպումը»,- նշել է Ահարոնյանը: «Ուրախալի է, որ մեր հասարակությունն ուշադիր է նույնիսկ նման թերացումների հանդեպ, ուրեմն՝ բարեփոխումներն արդեն արդյունք են տալիս»,- հայտնել է Ահարոնյանն ու փոխանցել Գասպարյանի խոսքերը. «Ինչպես ասում են՝ Աստված իմ արդարությամբ թող ինձ դատի, իսկ ձեր արդարությամբ՝ թող ձեզ ների ու ողորմա»:

ԱՊՊԱ-ի պատմության հետ կապված հավելյալ մեկնաբանությունների կարիք չկա. թող ընթերցողը նորից կարդա մեր հրապարակումները, դրանք համադրի ոստիկանական արդարացումների հետ եւ իր համար ավելին կպարզի, քան դա ցանկանում են ՀՀ ոստիկանությունում: Այս թեմային կրկին անդրադառնալը համարում ենք անիմաստ: Ոստիկանապետին, սակայն, խորհուրդ ենք տալիս ժուժկալ գտնվել Աստծո անունը տալիս: Ավելի ճիշտ՝ ոչ թե մենք




ենք խորհուրդ տալիս, այլ Աստվածաշունչն է այդպես պատվիրում:

Ստորեւ հատուկ Վովա Գասպարյանի համար մեջբերում ենք «Ելք»-ի 20/7-րդ համարը. «Քո տեր Աստծու անունը զուր տեղը չպիտի արտասանես, որովհետեւ Տերը արդար չի համարում նրան, ով իր անունը զուր տեղն է արտասանում»:

*«ՀԺ», հունվարի 17, էջ 1*

ԷՍ ՈՒ՞Ր ԵՆՔ ԲՆԿԵԼ

## ԵՎ ԱՍՏՎԱԾ ԱՍԱՑ՝ ՎՈՎԱ



**ՀՀ ոստիկանապետ Վովա Գասպարյանը երեկ՝ կառավարության նիստից հետո որոշել էր շփվել լրագրողների հետ:**

Հարցերի պատասխանների մեծ մասը նորություն չէր պարունակում: Ոստիկանությունը բոլոր ուղղություններով աշխատանքներ է տանում, ոչ ոք չի կարող ոստիկանին նեղացնել, ոստիկանները մեր պահապան հրեշտակներն են, ոստիկանությունը քաղաքականությամբ չի զբաղվում եւ այլն, եւ այսպես շարունակ: Բայց թեմաներից մի քանիսի շուրջ Վովա Գասպարյանի պատասխանները նորություն էին: Օրինակ, վերջին շրջանում հեռուստատեսությամբ ակտիվորեն գովազդվող մանուկ երգչուհի Անգելինա Գասպարյանի՝ Վովա Գասպարյանի դստեր թեման: Մեր եւ Վովա Գասպարյանի երկխոսությունը ներկայացնենք ամբողջությամբ:

**- Պարոն Գասպարյան, ձեր պաշտոնը որքանո՞վ է օգնել ձեր դստեր հաջողություններին՝ որպես արտիստ:**

- Իմ դստերը ուղղակի 9 տարեկան երեխա ա, ուղղակի երգում ա, ոնց որ թե լավ էլ երգում ա:

**- Հայաստանում մի քանի տասնյակ հազար 9 տարեկան լավ երգող երեխա կա, բայց նրանցից շատ քչերն են հեռուստատեսությամբ երգում:**

- Հասել ա ինչ-որ որակի, որ երգում ա:

**- Դուք որեւէ կերպ չե՞ք միջամտել:**

- Ի սեր Աստծո, ես ոչ ընդունվելուց եմ տեղյակ եղել, ոչ էլ... մի քանի ամիս հետո եմ իմացել, որ իմ դուստրն ա:

Այսինքն արձանագրենք՝ Վովա Գասպարյանը բացարձակապես չի միջամտել, որ 9-ամյա Անգելինա Գասպարյանի երգելը համարյա ամեն օր ցույց տան հեռուստաեթերով: Նա նույնիսկ տեղյակ չի եղել, որ իր 9-ամյա դուստրը ընդունվել է (նա չի մասնավորեցնում թե որտեղ է ընդունվել), եւ այդ մասին իմացել է միայն մի քանի ամիս անց: Շատ ճշմարտանման է: Հավատացինք ու անցանք առաջ: Վովա Գասպարյանը համոզված է, որ ինքը մականուն չունի ու չի ունենալու: Մականվան մասին նրա եւ լրագրողներից մեկի զրույցը նույնպես ներկայացնենք ամբողջությամբ:

**- Մականունները մարդու որակի ու տեսակի մասի՞ն են խոսում:**

- Այդ թվում՝ նույնպես:

**- Դուք է՞լ մականուն ունեք:**

- Ո՞րն ա: «Տե՞ր», հա, որ ասում են՝ տեր:

**- Չէ՝ Ֆիքս:**

- Չեմ լսել, Ֆիքստուլ իմաստով, հա՞:

**- Այո, քանի որ դուք սիրում եք ցուցադրական բաներ անել:**

- Ես ուզում եմ, որ Ֆիքստուլի, թիթիզի ու լոպազի տարբերությունը հասկանաք: Ֆիքստուլը էն մարդն ա, որ ֆիքսում ա էն՝ ինչ որ կա: Թիթիզը փուչիկ ա, որ ուզում ա ձեւ անի, որ ինչ-որ բան իրանից ներկայացնում ա... Նենց որ, ես չեմ կարծում, որ ինձ կարող ա մականուն կպնել, ինձ մականուն կպցնող չի կարող լինել, ես մականունավոր մարդ չեմ, ես ունեմ Աստծու կողմից տրված անուն, ես կրում եմ իմ անունը՝ ծնողներիցս ստացած:

Ֆիքստուլն ու թիթիզը հասկացանք: «Լոպազ» բառի բացատրական ելույթը, հուսով ենք, կլսենք Վովա Գասպարյանի հաջորդ դասախոսության ժամանակ:

Իսկ մինչ այդ ընդամենը արձանագրենք, որ Վովա Գասպարյանին, բացի իր սեփական «ախրաննիկներից», ամենուր ուղեկցում են ոստիկանության շատ հայտնի բարձրաստիճան պաշտոնյաներ: Երեկ, օրինակ, կառավարության շենքի մոտ էին այդ հայտնիներից «Բազազը»՝ Երեւանի փոխոստիկանապետ Ռոբերտ Մելքոնյանը, որը րոպեն մեկ բջջայինով զանգահարում էր ինչ-որ մեկին ու զեկուցում Վովա Գասպարյանի գործողությունների մասին: «Պարոն գեներալ, հիմա նա շփվում է լրագրողների հետ»,- ասում էր Մելքոնյանը ու խոսելով հեռանում լրագրողներից: Երեւի հետո զեկուցում էր. «Ամեն ինչ վերահսկողության տակ է, ոստիկանապետի անվտանգությանը ոչինչ չի սպառնում»: Իսկ երբ Վովա Գասպարյանը մոտեցավ նստելու իր թանկարժեք «Բրաբուսը», պարզվեց, որ նրա բազմաթիվ ախրաննիկներից երեքը նախատեսված են նրա դուռը բացելու եւ նստման պրոցեսը բարեհաջող ավարտելու համար: Ափսոս, արդեն մոռացա, թե ինչ էր նշանակում «Ֆիքստուլ», եւ ինչ էր նշանակում «թիթիզ»: «Լոպազն» էլ ընդհանրապես չիմացվեց, թե ինչ է նշանակում:

*ՀԱՅԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ*
*«ՀԺ», հունվարի 13, էջ 2*